Р.С. ОВСЕПЯН, Г.З. МУСАЕЛЯН

КАДРЫ ДЛЯ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА

Обсуждаются вопросы прогнозирования потребности профессионального образования. Предлагается совмещение высшего профессионального образования с начальным (ремесленным) и средним профессиональным образованием и новым подходом к созданию новой системы профессиональной квалификации.

***Ключевые слова*:** профессиональное образование, малый и средний бизнес, обучение в течение всей жизни, начальное (ремесленное) и среднее профессиональное образование.

R.S. HOVSEPYAN, G.Z. MUSAYELYAN

PERSONNEL FOR SMALL AND MIDDLE-SIZED BUSINESSES

Issues related to the forecast of the demand for professional education are discussed. It is proposed to combine the higher professional education with the primary (craft) and secondary professional education and also with the new approach to the creation of a new professional qualification system.

Keywords: professional education, small and middle-sized business, lifelong learning, primary (craft) and secondary professional education.

ՀՏԴ 334.761

Ա.Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ա.Բ. ԱՍԼԱՆՅԱՆ, Ք.Ա. ՊԵՊԵԼՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՔՍՏԻԼ ԿԼԱՍՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

(*Գյումրի*)

Շարադրվում է նորարական տնտեսության արդիական հարցերի լուծման կլաստերային մոտեցման անհրաժեշտությունը: Դիտարկվում են ֆինանսական մեխանիզմների մշակման հնարավորությունները Շիրակի տարածաշրջանում տեքստիլ կլաստերի սուբյեկտների ձևավորման և արդյունավետ գործունեության նպատակով;

Առանցկային բառեր. կլաստերի ֆինանսական համակարգ, սիներգիական արդյունք, Շիրակի տարածաշրջանի տեքստիլ կլաստեր:

Շիրակի տարածաշրջանի համար տեքստիլ ու կարի արտադրությունների, հարակից արտադրությունների, գիտական ու կրթական կազմակերպությունների,

առևտրա-լոգիստիկական կենտրոնների տեղայնացում՝ կլաստերի շրջանակներում հնարավորություններ է ստեղծում Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման համար: Կլաստերային նախագծերի իրականացման շնորհիվ տարածաշրջանի ենթակառուցվածքների զարգացումը էականորեն բարձրացնում է նրա ներդրումային գրավչությունը: Կլաստերացման շնորհիվ տեքստիլ ճյուղի ձեռնարկությունների մրցունակության բարձրացումը հնարավորություններ է բացում ֆինանսական վիճակի էական բարելավման, գործունեության շահութաբերության բարձրացման, ներդրումային ներուժի ընդլայնման համար:

Նոր տնտեսական իրավիճակի հրատապ հարցերի լուծման համար կլաստերային մոտեցման անհրաժեշտությունը Շիրակի տարածաշրջանի տեքստիլ արդյունաբերությունում պայմանավորում է կլաստերների ձևավորման ու տնտեսական գործունեության ֆինանսական մեխանիզմի հիմնական դրույթների մշակման արդիականությունը:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ արտասահմանյան ու հայրենական գրականության մեջ առավել խորությամբ ուսումնասիրված են տեքստիլ արդյունաբերության կլաստերացման ընդհանուր խնդիրները [1]: Սակայն, Հայաստանում կլաստերների ստեղծման ու զարգացման ֆինանսական մեխանիզմի ձևավորման, դրանց ֆինանսական ապահովման հարցերը դեռևս բավարար լուսաբանված չեն տնտեսագիտական գրականության մեջ:

Կլաստերը կարելի է դիտարկել որպես ինքնազարգացող տնտեսական համակարգ, որի տարրերն են ձեռնարկությունների ենթահամակարգերը: Համակարգայնությունը՝ որպես ցանկացած կլաստերի անբաժան հատկություն, որը պայմանավորված է մասնակիցների միջև ամենատարբեր կապերի առկայությամբ, կանխորոշում է կլաստերի՝ որպես տնտեսագիտական ուսումնասիրության օբյեկտի յուրահատկությունը: Կլաստերի՝ որպես առանձնացված տնտեսական համալիրի դիտարկումը թույլ է տալիս խոսել վերջինիս ինքնուրույն ֆինանսական համակարգի մասին, որը ներառում է փոխկապակցված ձեռնարկությունների ֆինանսական համակարգերը, ֆինանսական ենթակառուցվածքը, ֆինանսավորման ու գործունեության արդյունավետության գնահատման առանձնահատուկ պայմանները [2]:

Կլաստերի մասնակիցների ցանցային փոխազդեցությունը, մրցակցությունը և փոխլրացնելիությունը, միջֆիրմային կոոպերացումը, ռեսուրսների համատեղ օգտագործումը, իրացման շուկաներում համատեղ աշխատանքը, տրանզակցիոն

ծախսերի կրճատումը, գիտելիքների ու մասնագիտական հմտությունների փոխանցումը ստեղծում են կլաստերի սիներգիական արդյունք, ինչը տնտեսագիտական իմաստով արտացոլվում է ձեռնարկությունների մրցունակության բարձրացման մեջ:

Ֆինանսական իմաստով, սիներգիական արդյունքը արտահայտվում է ավելացված արժեքի գերշահույթի ստեղծման մեջ: Ավելացված արժեքն արտացոլում է դրամական հոսքերի ու դրամական ֆոնդերի այն առանձնահատկությունը, որն առանձնացնում է կլաստերի մասնակից ձեռնարկությանը դրա սահմաններից դուրս գտնվող ֆիրմայից: Այն ստեղծվում է մասնակիցների կողմից և բաշխվում նրանց միջև:

Կլաստերի ստեղծումը նշանակում է նոր ֆինանսական համակարգի առաջացում: Կլաստերի ֆինանսական համակարգը ներկայացնում է ավելացված արժեքի ստացման գործում շահագրգիռ մասնակիցների՝ ընդհանուր հետաքրքրության վրա հիմնված, արդյունաբերա-տարածքային կլաստերի (ԱՏԿ) ամբողջականությունն ապահովող ֆինանսական հարաբերությունների ամբողջություն: ԱՏԿ-ների ձևավորման ու գործունեության ֆինանսական մեխանիզմի ստեղծումը ենթադրում է խոշոր, միջին և մանր ձեռնարկատիրության մասնավոր-կորպորատիվ մասնակիցների, ոչ-առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ գիտական ու կրթական կազմակերպությունների, մասնագիտական ասոցիացիաների, ազգային ու տարածաշրջանային մակարդակի պետական ու տեղական ֆինանսների ինտեգրում:

Ֆինանսական համակարգերի միավորման ներկայացված ձևը ի սկզբանե կոնֆլիկտային է սեփական շահերը հետապնդող մասնակիցների համար: Այստեղ միավորող խթան է հանդիսանում սիներգիական արդյունքը, որն արտահայտվում է տարածաշրջանի մրցունակության բարձրացման մեջ, ինչը և ծառայում է որպես ավելացված արժեքի անմիջական աղբյուր: Մյուս կողմից՝ պատասխանատվության ոչ համամասնական բաշխման հնարավորությունը և շահերի կոնֆլիկտը (այդ թվում՝ մարքեթինգի, արտադրության, վաճառքների և, վերջին հաշվով, մասնակիցների ինտեգրումից օգուտների բաշխման ոլորտներում) ունի բավականին հարաբերական բնույթ:

Այստեղից հետևում է՝ կազմակերպա-ֆինանսական հարաբերությունները պետք է այնպես կառուցվեն, որ ապահովվի ներգրավված մասնավոր-կորպորատիվ, պետական, տեղական իշխանությունների և մյուս շահառուների հետաքրքրու-

թյունների համաձայնեցումը: Առաջնահերթությամբ հանդես են գալիս պետության՝ որպես կլաստերային քաղաքականության նախաձեռնողի շահերը [3]: Այդ կապակցությամբ կլաստերի ֆինանսական մեխանիզմի ստեղծման գլխավոր պայմանն է նրա համապատասխանությունը, առաջին հերթին, տարածաշրջանի զարգացման ռազմավարությանը, երկրորդ՝ իշխանությունների առաջնահերթ խնդիրների լուծմանը, արդյունաբերության արդիականացմանը, ենթակառուցվածքային համալիրի ստեղծմանը, մրցունակության բարձրացմանը և այլն:

Ֆինանսական համակարգերի կոնֆլիկտայնության լուծման առանցքային գործոն է ձեռնարկության շահագրգռվածությունը՝ մասնակցությունը կլաստերի կազմում և, մյուս կողմից՝ կլաստերային համակարգի շահագրգռվածությունը՝ ձեռնարկության մասնակցությունը կլաստերի կազմում: Միևնույն ժամանակ, շահերի կոնֆլիկտայնության լուծումը ենթադրում է բոլոր շահագրգիռ կողմերի հետաքրքրությունների հաշվառում՝

1. կլաստերային համակարգում միավորման ցանկությունը՝ ունենալու իր կազմում տվյալ ձեռնարկությունը՝ մյուս մասնակիցների համար արժեքի ավելացման իր ունակությամբ,
2. պետության ցանկությունը՝ ունենալու նորամուծությունների բյուջետային ֆինանսավորման կազմակերպված ուղղություններ;
3. իննովացիոն ենթակառուցվածքների (համալսարանների, գիտա-հետազոտական կենտրոնների, վենչուրային հիմնադրամների և այլն) շահագրգռվածությունը՝ նորամուծությունների ներդրման ու առևտրայնացման մեջ:

Տեքստիլ կլաստերի ֆինանսական մեխամիզմը կառուցվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1. բազմամոդելայնություն,
2. ամբողջականություն և հիերարխիա,
3. ռազմավարական նպատակներին համապատասխանություն,
4. գիտա-նորամուծական գործունեության խթանում,
5. նորամուծությունների դիֆուզիա,
6. ռեսուրսների արդյունավետ բաշխում,
7. ավելացված արժեքի ստեղծում ու բաշխում:

Շիրակի տարածաշրջանում տեքստիլ կլաստերի ֆինանսական գործունեությունը ձևավորվում է համապատասխան գործառույթներով, որոնք իրականացնում են կլաստերային կառավարման համակարգի հայեցակարգային մոդելում (նկ.) ներկայացված սուբյեկտների կողմից:



Նկ. Տեքստիլ կլաստերային կառավարման համակարգի հայեցակարգային մոդելը

Տեքստիլ կլաստերի կոորդինացիոն խորհուրդը հանդես է գալիս որպես պետության, տեղական իշխանությունների, տեքստիլ հոլդինգների, կարի ձեռնարկությունների, լոգիստիկ կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, կլաստերի զարգացման գործում շահագրգիռ բոլոր շահառու կողմերի գործողությունների համակարգող, որոնց շահերը ներկայացված են իրականացվող ծրագրերում ու նախագծերում [4]:

Տեքստիլ կլաստերի շրջանակներում տեքստիլ կամ կարի ձեռնարկությունը նախագծող ընկերություններին պատվիրում է նախագծերի մշակում, իրականացնում է բիզնես-պլանների և տեխնիկա-տնտեսական հիմնավորումների նախապատրաստում, ինչպես նաև՝ նախագծերի պայմանների հաստատում Համակարգող Խորհրդում և դրա միջոցով՝ նախագծերի իրականացման մասին որոշումների ընդունում իշխանությունների կողմից, ապահովում է ներդրողների և ֆինանսավորման աղբյուրների որոնում, առևտրային բանկերի ու ապահովագրական ընկերությունների հետ համատեղ կատարում է ռիսկերի գնահատում և մշակում է ֆինանսավորման մոդելներ, որոշում ֆինանսների կառավարման ու նախագծերի իրականացման ալգորիթմ:

Նախագծային կառավարման ու ֆինանսավորման առաջարկվող սխեմայի առավելությունը, մեր կարծիքով, այն է, որ տեքստիլ կլաստերի ձևավորման ու գործունեության ընթաքում այն թույլ է տալիս համաձայնեցնել կլաստերային քաղաքականությունը և կլաստերային նախաձեռնող, տարածքային ու ճյուղային փոխազդեցությունները, հավասարակշռել շահառուների ֆինանսական ու ոչ-ֆինանսական շահերը:

Կլաստերային զարգացման չափանիշ է հանդես գալիս ավելացված արժեքի ստեղծումը, իսկ կլաստերի ձևավորման չափանիշ՝ վերջինիս ֆինանսական համակարգի կայուն զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Белоконская Е.Г.** Формирование финансового механизма промышленно-территориального кластера // Проблемы экономики, финансов и управления производством: Сборник научных трудов вузов России.- 26-й выпуск. - Иваново: Иван. хим.-техн. ун., 2009. - С. 22-27.
2. **Михеев А.А.** Развитие кластеров в региональных экономических системах: преимущества, проблемы, пути поддержки // Проблемы современной экономики. — 2008. — № 3. — С. 355–358.
3. Проблемы современной экономики. Кластеры и кластерные стратегии в развитии экономики региона. -2010.-№ 2 (34). Режим доступа: http://www.m-economy.ru/art.php?nArtId=3143.
4. **Сукиасян А.Г., Мкртчян А.О., Исраелян Х.С.** Создание регионального кластера на базе университетов и предприятий// Инновационное развитие социально-экономических систем: условия, результаты и возможности: Материалы V Международной научно-практической конференции. - Орехово-Зуево: ГГТУ, 2017.- С. 162-166.

А.Г. СУКИАСЯН, А.Б. АСЛАНЯН, К.А. ПЕПЕЛЯН

ФИНАНСОВЫЙ МЕХАНИЗМ ФОРМИРОВАНИЯ ТЕКСТИЛЬНОГО КЛАСТЕРА В ШИРАКСКОМ РЕГИОНЕ

Излагается необходимость применения кластерного подхода для решения актуальных вопросов инновационной экономики. Рассматривается возможность разработки финансового механизма с целью формирования и функционирования субъектов текстильного кластера в Ширакском регионе.

Ключевые слова: финансовая система кластера, синергетический эффект, текстильный кластер Ширакского региона.

A.G. SUQIASYAN, A.B. ASLANYAN, Q.A. PEPELYAN

THE FINANCIAL MECHANISM OF THE TEXTILE CLUSTER FORMATION IN SHIRAK REGION

The necessity of the cluster approach for solving the modern problems of innovative economy is stated. The possibility of developing the financial mechanisms for the formation and operation of the textile cluster entities in Shirak region are considered.

Keywords: financial system of the cluster, synergetic result, textile cluster of Shirak region.